# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2025 թվականի թիվ 1162-Ա

## ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով և 118-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ թիվ N 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Ղուկաս Խաչատրյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, Ծովագյուղ-Ճամբարակ խճուղի թիվ 1 / 1 հասցեում գտնվող առևտրի սրահի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0.20000հա մակերեսով հողատարածքի /կադաստրային ծածկագիր՝ 05-049-0148/ հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին, հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Ղուկաս Գուրգենի Խաչատրյանին պատկանող, Սևան-Ճամբարակ խաչմերուկ հասցեում գտնվող, 2011թ.կառուցված 84.03քմ մակերեսով առևտրի սրահի /ներքին մակերեսը՝ 62.86քմ/, 27.58քմ մակերեսով օժանդակ շինության /ներքին մակերեսը՝ 23.53քմ/ զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0.20000հա մակերեսով հողատարածքի /կադաստրային ծածկագիր՝ 05-049-0148/ նկատմամբ վերակագնել հողատարածքի հողհատկացման հիմքերը՝ 0.20000հա մակերեսով հողատարածքի նկատմամբ տրամադրելով անհատույց սեփականության իրավունք, անշարժ գույքի առքուվաճառքի նվիրատվության կամ փոխանակման դեպքում՝ համայնքային բյուջե հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը վճարելու պայմանով:
2. 05-049-0148 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, Ծովագյուղ-Ճամբարակ խճուղի թիվ 1 / 1 առևտրի սրահ հասցե:
3. Սևան համայնք, գ. Ծովագյուղ, Ծովագյուղ-Ճամբարակ խճուղի թիվ 1 / 1 հասցեում գտնվող 0.20000հա մակերեսով հողատարածքում 2020թ.կառուցված 648.57քմ մակերեսով առևտրի սրահը /ներքին մակերեսը՝ 580.77քմ , 5.7քմ մակերեսով կառուցված սան հանգույցը, 30.34քմ մակերեսով կառուցված օժանդակ շինությունը /ներքին մակերեսը՝ 26.09քմ/, 20.82, 18.40 և 11.35քմ մակերեսով ծածկերը ճանաչել օրինական / հաշվառման տեղեկանք՝ 2023M27PCX/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր 1քմ շինության համար 1748 դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1163-Ա**

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 02.02.2002թ. թիվ 88 և 29.12.2005թ. 2387-Ն որոշումներով և հիմք ընդունելով քաղ. «Գոռ–Դավ» ՍՊԸ–ի տնօրեն Կարեն Ղազարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց փողոց թիվ 65 / 1 և Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 67 հասցեներում գտնվող հողամասերը միավորելու, միավորված հողամասի գործառնական նշանակություն փոխելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 65 / 1 հասցե /վկայական՝ 29052025-05-0036/ և Սևան համայնք, ք. Սևան Գայի փողոց թիվ 67 /վկայական՝ 29052025-05-0019/ հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց փողոց թիվ 67 հողամաս հասցե:
2. Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց փողոց թիվ 67 հասցեում գտնվող, բնակավայրի՝ նպատակային նշանակություն, հասարակական՝ գործառնական նշանակություն ունեցող 0.6927հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի նշանակության:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1164-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Գևորգ Բաբայանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ–Նովայի փողոց 5 / 13, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ–Նովայի փողոց 5 / 18 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /վկայականներ՝ 07122022-05-0075, 16042025-05-0012/ միավորելու և միավորված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ–Նովայի փողոց 5 / 13 և Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ–Նովայի փողոց 5 / 18 հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ–Նովայի փողոց, 5 / 13 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտոնական իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2025 թվականի թիվ 1165-Ա

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Հաշառո» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. « Հաշառո» ՍՊԸ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Շահումյան փողոց թիվ 10 / 11 հասցե / տրամադրել 2025թ. 2-րդ եռամսյակի համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100դրամ;

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1166-Ա**

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Գոհար Առաքելյան» ԱՁ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Գոհար Առաքելյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Աբովյան փողոց 3 շենքից արևմուտք հասցե / տրամադրել 2025թ. 2-րդ եռամսյակի համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6000 դրամ;

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6000 դրամ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 08624761

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1167-Ա**

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի բ ենթակետի, հիմք ընդունելով «Մեսրոպ Ենգոյան » ԱՁ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Մեսրոպ Ենգոյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Ձկնորսների փողոց հասցե / տրամադրել 01.06.2025 - 30.09.2025թթ. ժամանակահատվածի համար՝ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 8000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1168-Ա**

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի, 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ - ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Ռազմիկ Հովհաննիսյան» ԱՁ-ին / գործունեությունը՝ Սևան համայնք, գյուղ Չկալովկա, Սևան-Գավառ խճուղի 20 հասցե /տրամադրել 15.06.2025-15.09.2025թթ. ժամանակահատվածի համար՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1169-Ա**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Դավիթ Հայրապետյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Դավիթ Հայրապետյանի կողմից իրականացված՝ Սևան համայնք, ք. Սևան, Վ. Տերյան փողոց թիվ 11 հասցեում կառուցված ավտոտնակի և պարսպի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1170-Ա**

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քա.ժդ. Սուրեն Գալստյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Սուրեն Գալստյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Դդմաշեն, 8-րդ փողոց թիվ 23 հասցեում գտնվող հողատարածքում բնակելի տան կառուցման համար:
2. Սուրեն Գալստյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1171-Ա**

### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Նազելի Կարապետյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Նազելի Կարապետյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Տիգրան Մեծ փողոց թիվ 22 հասցեում գտնվող հողատարածքում կիսանկուղով և մանսարդային հարկով բնակելի տան կառուցման համար:
2. Նազելի Կարապետյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1172-Ա**

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Կարեն Ավետիսյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Կարեն Ավետիսյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Դդմաշեն, 3-րդ փողոց թիվ 1 / 6 հասցեում գտնվող հողատարածքում առանձնատան և օժանդակ շինության կառուցման համար:
2. Կարեն Ավետիսյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**11 հունիսի 2025 թվականի թիվ 1173-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Սեդա Նիկողոսյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 / 42 հասցեում կառուցված 30.90քմ մակերեսով ավտոտնակը և 30.90քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 / 42 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 18.04.2024թ. թիվ 877-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 29.05.2025թ. պետական գրանցում ստացած 30.90քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, զբաղեցրած 30.90քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Սեդա Նիկողոսյանին:
2. Քաղ. Սեդա Մուկուչի Նիկողոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2025 թվականի թիվ 1174-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Ավետիս Դանիելյանի լիազոր անձ Փաշիկ Դանիելյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով Ավետիս Դանիելյանին պատկանող, Սևան համայնք, գ. Լճաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1391448, տրված՝ 20.06.2003թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Լճաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, 12-րդ փողոց թիվ 5 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2025 թվականի թիվ 1175-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի» ԿԿ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի» ԿԿ-ին / Գարեգին Բ Ներսիսյան/ տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Լճաշեն, 2-րդ փողոց թիվ 29 / 1 հասցեում գտնվող ջրամիացման համակարգի կառուցման համար:
2. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի» ԿԿ-ն / Գարեգին Բ Ներսիսյան/ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի» ԿԿ-ն / Գարեգին Բ Ներսիսյան/ պարտավոր են շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 11
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2025 թվականի թիվ 1176-Ա

## «ՄԵՐ-ՍԻՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՍԻՐԵԿԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Քննելով «Մեր-Սիր» ՍՊԸ-ի տնօրեն Սիրեկան Բաղդասարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի. ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից 28.04.2025 թվականին կազմված արձանագրությունը ստացվել է Սևանի համայնքապետարանում 05.05.2025 թվականին: Ըստ կազմված արձանագրության՝ Սիրեկան Բաղդասարյանը իրեն կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում իրականացնում է 8 (ութ հատ) քարից տաղավարների շինարարություն: Սևանի համայնքապետարանի տեղազննող հանձնախումբը տեղում ուսումնասիրեց տաղավարների կառուցման (տեղադրման) փաստը: Միաժամանակ հանձնախմբի կողմից պահանջվեց ՍՊԸ-ի տնօրենին դադարեցնել շինարարական աշխատանքները, ապամոնտաժել այդ շինությունները և տարածքը բերել նախկին տեսքի: Տաղավարների երկրաչափական չափերը նշված են արձանագրության մեջ և համապատասխանում են փաստացի դրանց իրական չափերին: ՍՊԸ-ի տնօրենին սահմանված կարգով ուղարկվել են ծանուցագրեր՝ շինարարությունը դադարեցնելու, ինչպես նաև տնօրենից պահանջվել է ներկայանալ համայնքապետարան պարզաբանումներ տալու և վարչական գործի քննությանը մասնակցելու համար: 2025 թվականի հունիսի 6-ին քաղաքացին ներկայացել է համայնքապետարան և տվել է պարզաբանումներ: Տնօրենը հայտնել է, որ տաղավարների կառուցումը իրականացրել է 2023 թվականի գարնանը: Փաստական հանգամանք է, որ «Մեր-Սիր» ՍՊԸ-ի տնօրենը շինարարությունը իրականացրել է առանց օրենքով սահմանված կարգով շինարարության թույլտվություն ստանալու: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների այդ շինությունները հանդիսանում են ինքնակամ : ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 8-րդ հոդվածի իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, իսկ պատասխանատվություն սահմանող կամ այն ուժեղացնող ակտերը հետադարձ ուժ չունեն: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն վարչական իրավախախտման տույժը նշանակվում է իրավախախտման պատասխանատվություն նախատեսող նորմատիվ իրավական ակտով սահմանված շրջանակներում սույն օրենսգրքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածը 16.12.2021 թվականի ՀՕ-401-Ն օրենքով սահմանված փոփոխության համաձայն՝ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, վերակառուցելը կամ տեղադրելը առաջացնում է տուգանքի նշանակում

սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ հողատարածքը հանդիսանում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողամաս, որում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացման ենթակա չեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով,42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ որոշում եմ

1. «Մեր-Սիր» ՍՊԸ–ի տնօրեն Սիրեկան Բաղդասարյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:
2. Պահանջել քաղաքացուց ապամոնտաժելու ինքնակամ շինությունները:
3. Վարչական տուգանքի գումարը կամավոր վճարել 15-օրյա ժամկետում Սևանի համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետի պահանջները չկատարելու դեպքում՝ հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2025 թվականի թիվ 1177-Ա**

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Մանիկ Խաչատրյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Մանիկ Խաչատրյան» ԱՁ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Լճաշեն բնակավայր, 1-ին փողոց թիվ 1 հասցե / տրամադրել 2025թ. 1-ին և 2-րդ եռամսյակների համար՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2025 թվականի թիվ 1178-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Արտակ Խաչատրյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Արտակ Խաչատրյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գյուղ Ծավագյուղ, Ծովագյուղ-Ճամբարակ խճուղի 7,8կմ թիվ 1 հասցեում գտնվող ռեստորանային համալիր, միահարկ և երկհարկանի հյուրատներ, օժանդակ շինություններ կառուցելու համար:
2. Արտակ Խաչատրյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Արտակ Խաչատրյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2025 թվականի թիվ 1179-Ա

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Վարդան Սարիբեկյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Վարդան Սարիբեկյանի կողմից իրականացված՝ Սևան համայնք, ք. Սևան, Կոմիսարների փողոց թիվ 41 հասցեում կառուցված բնակելի տանը կից կցակառույցի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտոնական հրապարակելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 12
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2025 թվականի թիվ 1180-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Հասմիկ Եզոյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Ջովաբեր, 7-րդ փողոց թիվ 15 / 1 հասցեում գտնվող հողամասի /վկայական՝ N04062025-05-0041/ զբաղեցրած 0.089945հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Ջովաբեր, 7-րդ փողոց թիվ 15 / 1 հասցեում գտնվող 0.089945հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու նպատակով, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Ջովաբեր, 7-րդ փողոց թիվ 15 / 2 հողամաս հասցեում գտնվող 0.01925հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 04062025-05-0032/ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ համար՝ 514,8 դրամ վճարելու պայմանով օտարել Հասմիկ Վաղլամի Եզոյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 12
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2025 թվականի թիվ 1181-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Աշոտ Սարգսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, 5-րդ մ/թաղ, ավտոտնակների շարք հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1055482, տրված՝ 05.09.2006թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, 5-րդ մ/թաղ, ավտոտնակների շարք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ռուսական փողոց թիվ 17 / 40 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 13
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2025 թվականի թիվ 1182-Ա

### ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 19.09.2024Թ. N 2061-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝19.09.2024թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 2061-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 13
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2025 թվականի թիվ 1183-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 21.05.2025Թ. N 1030-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 21.05.2025թ. «Նախագծման թույլտվություն տրամադրելու մասին» N 1030-Ա որոշումը և ՆՆԹ-4087-25 նախագծման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 13
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2025 թվականի թիվ 1184-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-079-0122-0001 կադաստրային ծածկագրով /գ. Սեմյոնովկա/, 22.2380հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 13
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2025 թվականի թիվ 1185-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Աստղիկ Անտոնյանի լիազոր անձ Կարինե Պետրոսյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Աստղիկ Անտոնյանին պատկանող, Դդմաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 20.04.1992թ. N12 նիստի որոշմամբ՝ Աստղիկ Անտոնյանին, Սմբատ և Վիգեն Սմբատյաններին անհատական բնակելի տան համար սեփականաշնորհված 1900քմ մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Աստղիկ Անտոնյանին պատկանող, Դդմաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 20.04.1992թ. N 12 նիստի որոշմամբ Դդմաշեն համայնքում անհատական բնակելի տան կառուցման համար Աստղիկ Վանիկի Անտոնյանին /ծնված՝27.06.1963թ./, Սմբատ Արտավազդի Սմբատյանին /ծնված՝ 03.03.1992թ./, Վիգեն Արտավազդի Սմբատյանին /ծնված՝ 25.06.1993թ./ սեփականաշնորհված 1900քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 380քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Աստղիկ Անտոնյանի, Սմբատ և Վիգեն Սմբատյանների սեփական գույքը:
2. Աստղիկ Անտոնյանին, Սմբատ և Վիգեն Սմբատյաններին պատկանող 2280քմ մակերեսով հողատարածքում 1950-1958թթ. կառուցված 138.3քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 98.4քմ/, 1978թ. կառուցված 30.7քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 24.9քմ/, 120.8քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 101.3քմ/, 1962թ. կառուցված 21.0քմ մակերեսով խոհանոցը /ներքին մակերեսը՝ 16.6քմ/, 11.5քմ մակերեսով պարիսպը ճանաչել Աստղիկ

Անտոնյանի, Սմբատ և Վիգեն Սմբատյանների սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 բնակելի տուն հասցե:

3. Աստղիկ Անտոնյանին, Սմբատ և Վիգեն Սմբատյաններին պատկանող Սևան համայնք, գյուղ Դդմաշեն, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 հասցեում գտնվող 2280քմ մակերեսով հողատարածքում 2008թ․կառուցված 4.6քմ մակերեսով բնակելի տանը կից շինությունը /ներքին մակերեսը՝ 3.30քմ/ ճանաչել ինքնակամ :
4. Աստղիկ Անտոնյանին, Սմբատ և Վիգեն Սմբատյաններին պատկանող Սևան համայնք, գյուղ Դդմաշեն, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 հասցեում գտնվող 2280քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 25․8քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Սևան համայնք, գ․ Դդմաշեն, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 / 1 հողամաս հասցե՝ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը վճարելու պայմանով /1քմ՝ 514․8դրամ/ օտարել Աստղիկ Անտոնյանին, Սմբատ և Վիգեն Սմբատյաններին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 13
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

**13 հունիսի 2025 թվականի թիվ 1186-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հիմք ընդունելով ք. Սևան Աշոտ-Երկաթի փողոց թիվ 5 տան բնակիչ Էդիկ Վարդանյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Էդիկ Վարդանյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Աշոտ Երկաթի փողոց թիվ 5 հասցեում գտնվող 285.0քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Էդիկ Հրաչիկի Վարդանյանին /ծնված՝ 15.01.1965թ./ պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Աշոտ Երկաթի փողոց թիվ 5 հասցեում գտնվող 454.1քմ մակերեսով հողատարածքի, որից՝ 149.0քմ մակերեսով հողատարածքը ընդհանուր օգտագործման, կից գտնվող 57.0քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Էդիկ Վարդանյանի սեփականության իրավունքը:
2. Էդիկ Վարդանյանին պատկանող 342.0քմ մակերեսով հողատարածքում 1965թ. կառուցված 12.58քմ մակերեսով նկուղի /ներքին մակերեսը՝ 9.90քմ/, 117.01քմ մակերեսով բնակելի տան /ներքին մակերեսը՝ 79.92քմ/, 22.68քմ մակերեսով օժանդակ շինության /ներքին մակերեսը՝ 17.90քմ/, 65.43քմ մակերեսով անասնաշենքի /ներքին մակերեսը՝ 57.17քմ/ և 0.87քմ մակերեսով պարսպի նկատմամբ ճանաչել Էդիկ Հրաչիկի Վարդանյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Աշոտ Երկաթի փողոց թիվ 5 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 13
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2025 թվականի թիվ 1187-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Սամվել Ենգիբարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Սամվել Ենգիբարյանին պատկանող, Գեղամավան համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 10.02.1991թ. N 1 նիստի որոշմամբ՝ Սամվել Ենգիբարյանին անհատական բնակելի տան կառուցման համար սեփականաշնորհված 2800քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Սամվել Ենգիբարյանին պատկանող, Գեղամավան համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 10.02.1991թ. N1 նիստի որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղում գտնվող, Սամվել Հրանտի Ենգիբարյանին / ծնված՝ 18.07.1966թ./ անհատական բնակելի տան կառուցման համար սեփականաշնորհված 2800քմ մակերեսով հողատարածքին կից՝ 550.5քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Սամվել Ենգիբարյանի սեփականության իրավունքը:
2. Սամվել Ենգիբարյանին պատկանող 3350.5քմ մակերեսով հողատարածքում 1960թ. կառուցված 116.28քմ մակերեսով կիսանկուղը /ներքին մակերեսը՝ 73.2քմ/, 120.64քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 85.7քմ/, 123.2քմ մակերեսով անասնաշենք-ավտոտնակի /ներքին մակերեսը՝ 90.3քմ/, 68.8քմ մակերեսով կիսանկուղ խոհանոցը /ներքին մակերեսը՝ 53.9քմ/, 59.17քմ մակերեսով խոհանոցը /ներքին մակերեսը՝ 49.7քմ/, 11.8քմ մակերեսով հարթակը ճանաչել Սամվել Հրանտի Ենգիբարյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց թիվ 27 բնակելի տուն հասցե:

3. Սամվել Ենգիբարյանին պատկանող, Սևան համայնք, գյուղ Գեղամավան, 12-րդ փողոց թիվ 27 հասցեում գտնվող 3350.5քմ մակերեսով հողատարածքում 2024թ. կառուցված 13.7քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 12.7քմ/, 2023թ. կառուցված 54.2քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 48.4քմ ճանաչել ինքնակամ շինություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 13
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2025 թվականի թիվ 1188-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. N 286 որոշման 43-րդ կետով և հիմք ընդունելով քաղ. Ռաֆիկ Սարգսյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գյուղ Ծաղկունք հասցեում գտնվող 5 հա մակերեսով հողատարածքը /կադաստրային ծածկագիր՝ 05-047-0302-0003/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Ծաղկունք հասցեում գտնվող, վարձակալության իրավունքով Ռաֆիկ Սարգսյանին պատկանող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 5հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել Ռաֆիկ Մինասի Սարգսյանին՝ հողի կադաստրային արժեքը /1քմ- 100.5 դրամ/ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 13
ք.Սևան